# ԵՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ

**ԵՄ աջակցությունը Հայաստանի արդարադատության ոլորտին 2009 թվականից ի վեր հիմնականում տրամադրվել է բյուջետային աջակցության ձևաչափով: Այս ծրագրերը ներառում են ֆինանսական փոխանցումներ Հայաստանի պետական գանձապետարանին՝ զուգակցված հավելյալ տեխնիկական աջակցությամբ:**

## ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԾՐԱԳՐԵՐՆ ԵՆ՝

### 1. Աջակցություն Հայաստանի արդարադատության ոլորտի բարեփոխումներին

Իրականացման ժամանակաշրջան՝ **2024-2026 թթ.**
(Փուլ 2)

Բյուջե՝ **€11.000.000**

**ՆՊԱՏԱԿ**

Աջակցել արդարադատության և հակակոռուպցիոն ոլորտներում, մասնավորապես բարեվարքության, հաշվետվողականության, անկախության, որակի, արդյունավետության և հատկապես խոցելի խմբերի համար հաստատությունների մատչելիության ապահովման ուղղությամբ միջազգային չափանիշների ներդրմանը:

### 2. Աջակցություն Հայաստանի արդարադատության ոլորտի բարեփոխումներին

Իրականացման ժամանակաշրջան՝ **2020-2024 թթ.**
(Փուլ 1)

Բյուջե՝ **€30.000.000**

**ՆՊԱՏԱԿ**

Նպաստել ավելի անկախ, թափանցիկ, հաշվետու, մատչելի և արդյունավետ դատական համակարգի ձևավորմանը՝ «Իրավական և դատական բարեփոխումների 2012–2016 թվականների ռազմավարական ծրագրին» համահունչ:

### 3. Աջակցություն Հայաստանի արդարադատության ոլորտի բարեփոխումներին

Իրականացման ժամանակաշրջան՝ **2014-2016 թթ.**

Բյուջե՝ **€29.000.000**

**ՆՊԱՏԱԿ**

Աջակցել Հայաստանի արդարադատության ոլորտին՝ արդյունավետորեն ապահովելու իրավունքի գերակայությունը և պայքարելու կոռուպցիայի դեմ:

# ԵՄ ԸՆԹԱՑԻԿ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## 1.Աջակցություն մարդու իրավունքներին

Իրականացման ժամանակաշրջան՝
**01.06 2024թ.-31.05.2027թ.**

Ընդհանուր բյուջե՝ **€2.585.440**

### ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽ

Ապահովել ավելի արդյունավետ և հաշվետու ծառայությունների մատուցում՝ հիմնված մարդու իրավունքների և իրավունքի գերակայության սկզբունքների վրա:

## 2.Աջակցություն ոստիկանության բարեփոխումներին

Իրականացման ժամանակաշրջան՝
**01.05.2023թ.- 30.04.2025թ.**

Ընդհանուր բյուջե՝ **€2.222.222**

### ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽ

«Աջակցություն Հայաստանի իրավապահ և անվտանգության ոլորտների բարեփոխումներին» ծրագիրը նպատակ ունի աջակցել Հայաստանի Հանրապետությանը իրավապահ և անվտանգության ոլորտներում բարեփոխումների իրականացման գործում՝ համաձայն Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ) սահմանված առաջնահերթությունների և Եվրոպական միության լավագույն փորձի հիմնական ուղղությունների, որոնք են՝ նոր նախարարության ստեղծման և արդյունավետ գործունեության ապահովումը, ոստիկանության բարեփոխումների իրականացումը, միգրացիայի և անձնական նույնականացման փաստաթղթերի տրամադրման ծառայությունների արդիականացումը:

## 3.Արդարադատության բարեփոխումների մոնիթորինգ Հայաստանում (Juremonia)

Իրականացման ժամանակաշրջան՝
**2024 - 2026 թթ.**

Ընդհանուր բյուջե՝ **€760.000**

### ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽ

Հզորացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունները՝ արդյունավետ մասնակցելու Հայաստանի արդարադատության ոլորտի բարեփոխումներին:

## 4.Աջակցություն միգրացիայի ոլորտին

Իրականացվել է երկու ծրագրի միջոցով՝

ՄՄԿ՝ **€1.950.000**

ՄՔՄՄԿ՝ **€1.150.000**

### ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽ

**1.** Խթանել Միգրացիայի և Քաղաքացիության ծառայության ինտեգրումը Ներքին գործերի նախարարության կազմում՝ աջակցելով համապարփակ միգրացիոն ռազմավարության և համապատասխան գործողությունների ծրագրի մշակմանը, միջազգային պաշտպանության համակարգի և փախստականների պաշտպանության օրենսդրության կատարելագործմանը, ինչպես նաև պետական բնակչության ռեգիստրի տեխնիկական հնարավորությունների բարելավմանը և տվյալների հավաքագրման գործընթացների արդիականացմանը:
**2.** Մշակել արտակարգ իրավիճակների միգրացիոն կառավարման ռազմավարություն և իրականացնել կարողությունների բարձրացման միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակներին արձագանքման նպատակով: Մշակել էլեկտրոնային քաղաքացիության տրամադրման և դադարեցման գործերի կառավարման համակարգ, ներդնել որակի վերահսկման ստանդարտ գործողությունների ընթացակարգեր միգրացիայի և քաղաքացիության ծառայությունների համար, ինչպես նաև բարձրացնել էլեկտրոնային վիզաների տրամադրման կարողությունները:

## 5.Աջակցություն տվյալների պաշտպանությանը Հայաստանում

Իրականացման ժամանակաշրջան՝
**2025 - 2026**

Ընդհանուր բյուջե՝ **€239.000**

### ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽ

**1** Ազգային տվյալների պաշտպանության վերահսկող մարմնի և այլ համապատասխան շահառուների կարողությունների զարգացում՝ Հայաստանում անձնական տվյալների պաշտպանության ապահովման համար:
**2.** Քաղաքականություն մշակողների, տվյալների սուբյեկտների, տվյալների վերահսկողների և մշակողների, ինչպես նաև լայն հասարակության շրջանում տվյալների պաշտպանության օրենսդրության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:

## 6.Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին,

II փուլ, Իրականացման ժամանակաշրջան՝
**26.05.2024 - 26.05.2026**

Ընդհանուր բյուջե՝ **€1.700.000**

### ՆՊԱՏԱԿ

**1.** Արդարադատության և հակակոռուպցիոն բարեփոխումների ամրապնդում
**2.** Քրեական արդարադատության համակարգի համապատասխանեցում եվրոպական չափանիշներին
**3.** Ռազմավարական քաղաքական երկխոսության խթանում
**4.** Կառավարման և հաշվետվողականության բարելավում